



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԵՂԱՄ ՕՐԷՆՃ ՔԱՈՒՆԹԻԻ ԳԱՂՈՒԹԻՆ ՀԵՏ

Կիրակի, 29 Յունիս 2008-ն պատմական օր մը եղաւ Օրէնճ Քաունթիի գաղութին համար, երբ գաղութի զաւակները միախմբուած, միասնաբար նշեցին Այլակերպութեան տօնը, աղօթք բարձրացուցին Վեհափառ Հայրապետի արելատուութեան համար, բարի մաղթանքներով շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազան Հօր Առաջնորդական վերընտրութիւնը, վայելեցին Զրիստոնեական Դաստիարակութեան տարուան նուիրուած դասախօսական ձեռնարկը, միասին բաժնեցին սիրոյ ճաշը, եւ ներկայ եղան Հայ Կեդրոնի վերանուանման հանդիսութեան:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Հայաստանայց Առաքելական Եկեղեցին Կիրակի օր նշեց Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն Այլակերպութեան տօնը, որ մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի Պայծառակերպութեան տօնն է, ժողովուրդին ծանօթ՝ Վարդավառի տօն անունով:

Նոյն օրը նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 13-րդ տարեդարձն ըլլալով, յընթացս Ս. Պատարագին, Արեւմտեան Թեմի եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք:

Այս գոյգ առիթներով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, աւուր պատշաճի քարոզեց ու հանդիսապետեց «Հայրապետական Մաղթանք»ի յատուկ արարողութեան:

Սուրբ Սեղանին սպասարկեցին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քիւնյ. Երեցեան: Աղօթակից եր նաեւ Արժ. Տ. Վարանդ Քիւնյ. Ամիրալեան, Յունաստանէն:

Հաւատացեալներ համախմբուած էին եկեղեցւոյ կամարներուն տակ, հաղորդակից ըլլալու օրուան խորհուրդին, ինչպէս նաեւ այս առիթով շնորհաւորելու Առաջնորդ Սրբազան Հօր չորրորդ քառամեակի համար Առաջնորդ վերընտրութիւնը:

Սրբազանը իր քարոզին մէջ նախ անդրադարձաւ Վարդավառի տօնի հին հեթանոսական ծագման ու ժողովրդական կիրարկութեան մասին, զայն

ընտրողները որպես սիրոյ, սրբութեան, անմեղութեան ու գեղեցկութեան տօն, երբ մեր նախնիները իրարու վրայ ջուր կը սրսկէին, ճերմակ աղաւնիներ կ'արծակէին ու վարդեր կը ցրուէին, ի նշան սիրոյ եւ խաղաղութեան ու բարութեան: Ապա Սրբազան Յայրը բացատրեց, թէ ինչպէս մեր հաւատքի հայր Ս. Գրիգոր Լուսաւորիչը՝ ինք, հեթանոսական այս տօնին միացուց մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի հրաշափառ Այլակերպութեան ու Պայծառակերպութեան տօնը, որովհետեւ Զրիստոսի անձին՝ մէջ լիիրաւ արժէք ու ամբողջական կատարում ունեցան սերը, բարութիւնը, անմեղութիւնը, գեղեցկութիւնը եւ ազնուութիւնը:

Սրբազանը իր հոգեւոր պատգամը ուղղելով գաղութի գաւազներուն,

ա) շեշտեց աղօթքին անհրաժեշտութիւնը հայ անհատին ու ընտանիքի կեանքէն ներս, իբրեւ միջոց վերանորոգութեան, հաւատքի ամրապնդման եւ Աստուծոյ հետ հաղորդակցութեան: Յիսուս, ըսաւ ան, նախքան պայծառակերպուիլը, կ'աղօթէր. եւ աղօթքի մթնոլորտին մէջ էր որ Անոր դէմքը լուսաւորուեցաւ: Նոյնպէս ալ հաւատացեալի կեանքի մէջ աղօթքը զինք կը պայծառացնէ, կը լուսաւորէ, զինք Աստուծոյ դիմաց կը հանէ, կ'ազնուացնէ, կը խոնարհեցնէ: Իսկ ան որ այս վիճակին մէջ ըլլայ՝ Աստուծմէ կը ստանայ իր աղօթքին պատասխանը:

բ) Մեր անհատական, ընտանեկան թէ ազգային կեանքին համար հրաւէ՛ր մըն է այս տօնը: Ինչպէս որ Յիսուսի Առաքեալները իրենց սովորական վիճակէն վեր ելան ու ապա արժանի եղան մեծ նշաններ տեսնելու, այնպէս ալ մենք պետք է մեր սովորական վիճակէն, ըսի ըսաւներէն վեր ելլենք, իրարու օգնելով, իրարու մասին լաւն ու բարին մտածելով, բոլորս միասին առաջ երթալու համար: Եթէ մենք սովորական երեւոյթներէ դուրս գանք՝ լոյսը աւելի՛ յստակ կը տեսնենք ու լոյսին աւելի՛ կը հասնինք:

Ապա, Սրբազան Յայրը խօսեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Ս. Աթոռին տարած ծառայութեան մասին, մեր ժողովուրդի կեանքէն ներս, յետ եղեռնեան շրջանէն մինչեւ այսօր, յատկապէս շեշտելով Վեհափառ Յայրապետին արի ու քաջ հովուապետութիւնն ու առաջնորդութիւնը Յայ Եկեղեցւոյ ու մեր ժողովուրդի կեանքին մէջ: Սրբազանը աղօթք բարձրացուց առ Աստուած եւ խնդրեց, որ արեւշատութիւն պարգեւէ Վեհափառ Յայրապետին, պայծառ տեսիլք տայ, որպէսզի ան մեր ազգը դէպի հրաշատեսիլ ուղիներ առաջնորդէ: Սրբազանը նաեւ աղօթեց, որ Աստուած Վեհափառին հովուական գաւազանը միշտ ծաղկուն պահէ ու բոլորիս ընծայէ իր հովուապետութիւնը վայելելու երկար տարիներ:

Ս. Պատարագի աւարտին, «Կիլիկիա» եւ «Ի վեհ բարձանց» մաղթերգներէն ետք, հաւատացեալներ հերթով մօտեցան եւ աջահամբոյրով շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազան Յայրը՝ վերընտրութեան առիթով, մաղթելով անոր արեւշատ օրեր, ծրագիրներու յաջողութիւն եւ բարի առաքելութիւն:

ՍԻՐՈՅ ԾԱՇ

Ս. Պատարագէն ետք, Եկեղեցւոյ կից գտնուող «Ղուկասեան Սրահ»էն ներս տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, մասնակցութեամբ գաղութի գաւազներուն:

Սիրոյ ճաշը կը հովանաւորէին Տէր եւ Տիկին Սարգիս եւ Մանուշակ Եկէնեան:

Յանուն Օրէնճ Քաունթիի ծխական մեծ ընտանիքին, շնորհաւորական խօսքերով հանդէս եկան Եկեղեցւոյս հոգեւոր հովիւը եւ Ազգային Վարչութեան ատենապետ Տիար Կարօ Յակոբեան, որոնք շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազան Յայրը, մաղթելով անոր բարեբեր ու բեղուն ծառայութիւն եւ նորանոր յաջողութիւն՝ յօգուտ Թեմիս պայծառացման եւ ի շինութիւն Եկեղեցւոյս: Սրբազան Յայրն ալ, իր կարգին, գնահատեց բոլորը եւ շնորհակալութիւն յայտնեց իր անձին հանդէպ արտայայտուած յարգանքին, ազնիւ խօսքերուն ու բարեմաղթութեանց համար:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ԾԻՐԵՆ ՆԵՐՍ ԱՌԱՋԻՆ ՁԵՆՆԱՐԿ-ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս ծանօթ է, Վեհափառ Յայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը այս տարին հռչակած է «Քրիստոնէական Դաստիարակութեան Տարի»: Այս ծիրէն ներս՝ բազմաթիւ միջոցառումներ նախատեսուած են մեր Թեմէն ներս ամբողջ տարուան ընթացքին, ինչպիսիք՝ դասախօսական շարքեր, պատկերասփիւռի յայտագիրներ, գեղարուեստական ձեռնարկներ եւ գիրքերու հրատարակութիւն:

Առ այդ, նոյն օրը, յետ միջօրէին, Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ Յոգաբարձութեան կազմակերպութեամբ, եւ հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր, տեղի ունեցաւ Քրիստոնէական Դաստիարակութեան Տարուան նուիրուած առաջին դասախօսութիւնը, »Քրիստոնէական Դաստիարակութիւնը եւ Յայ Երիտասարդը« նիւթով: Օրուան դասախօսն էր Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Տ. Յրանդ Քինյ. բացման խօսքէն ետք հրաւիրեց դասախօս Յայր Սուրբը, որ ներկայացնէ իր նիւթը: Յայր Սուրբը նախ անդրադարձաւ ընդհանրապէս դաստիարակութեան ու յատկապէս Քրիստոնէական դաստիարակութեան անհրաժեշտութեան՝ Յայ պատանիին ու երիտասարդին կեանքի մէջ: Ապա խօսեցաւ չորս կառոյցներու մասին՝ Ընտանիք, Դպրոց, Եկեղեցի եւ Միութիւն, ուր պիտի կազմաւորուին վաղուան մեր երիտասարդները, շեշտելով այն՝ որ առանց այս չորս կառոյցներուն առողջ պահպանման ու միատեղ գործակցութեան՝ դժուար պիտի ըլլայ ունենալ մեր փափաքածին համաձայն երիտասարդներ, որոնք ներկայի ու ապագայի դէկը պիտի ստանձնեն մեր հաւաքական կեանքէն ներս:

Տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր. եկեղեցւոյ դպրաց դասի երգչախումբը հոգեգմայլ ձեւով մեկնաբանեց չորս երգեր՝ «Յայր Մեր», «Տէ՛ր, կեցո՛ր դու գհայս», «Տէ՛ր, ողորմեա՛» (նոր մշակումով) եւ «Լռեց. ամպերը եկան ծածկեցին», ղեկավարութեամբ բազմավաստակ ղեկավար՝ Տիար Արամ Աղպապեանին:

Փակման խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Յայրը, որ գնահատելէ ետք օրուան բանախօս Յայր Սուրբը, Տէր Յայրն ու երգչախումբի կատարումը, կարեւորութեամբ շեշտեց Քրիստոնէական

դաստիարակութեան անհրաժեշտութիւնը մեր հաւաքական թէ անհատական կեանքէն ներս, կոչ ուղղելով բոլորին, որ այս տարի մեր մտածումները կեդրոնացնենք այս յոյժ կարեւոր հարցին վրայ, եւ միատեղ աշխատինք՝ ի խնդիր մեր նոր սերունդի առողջ դաստիարակութեան եւ զարգացման:

Սրբազան Յօր «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ վերջ գտաւ դասախօսական երեկոն:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, շրջապատուած հոգեւորականաց դասուն եւ պատուարժան ազգայիններու, կատարեց Օրէնճ Քաունթի Հայ Կեդրոնի վերանուանման յատուկ արարողութիւնը:

PRELATE CELEBRATES THE FEAST OF TRANSFIGURATION AT FORTY MARTYRS CHURCH IN ORANGE COUNTY

On Sunday, June 29, 2008, the Armenian community of Orange County came together to celebrate the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ, to offer Pontifical thanksgiving prayers for H.H. Aram I, congratulate the Prelate on his re-election, listen to a lecture dedicated to the Year of Christian Education, and to participate in the renaming of the Armenian Center.

The momentous day began with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrating Divine Liturgy on the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ, during which he presided over Pontifical thanksgiving prayers on the 13th anniversary of the enthronement of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. The Prelate was assisted at the altar by Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant Yeretzian. Rev. Fr. Varant Amiralian, who is visiting from Greece, also participated in the service.

The Prelate began his sermon by referencing the popular traditions associated with the Feast of the Transfiguration such as the splashing of water, releasing of doves, and distributing of roses, which were all symbols of love, peace, and goodness. The Prelate then explained how St. Gregory the Illuminator combined the celebration of the miraculous transfiguration of our Lord with these popular traditions because Christ was the manifestation of love, goodness, innocence, beauty, and humility.

The Prelate stressed the significance of prayer in the lives of each individual and family as a means of renewal, a way of strengthening our faith and communicating with God. He reminded the faithful that Jesus Christ was in the midst of prayer when He was transfigured and illuminated, and that prayer can similarly brighten and illuminate our lives and humble us before God. He continued to say that just as the Apostles became worthy of witnessing the transfiguration of Jesus Christ by rising above their ordinary circumstances, we too must rise above our everyday circumstances, let go of hate and help each

other instead, so that we can all be worthy of having that Light shine more clearly in our lives.

The Prelate concluded his sermon by emphasizing the invaluable role the Catholicosate of Cilicia has had in the lives of our people and especially the strong leadership and guidance of our Pontiff. Thus, the Prelate prayed for the Lord to grace His Holiness with many more years of health so that so that he may continue his mission of leading our church and people.

At the conclusion of the service, parishioners had the opportunity to congratulate the Prelate on his re-election and to wish him health and success in his mission. A reception followed at the adjacent "Gugasian" Hall, which was hosted by Mr. and Mrs. Sarkis and Manoushag Yegenian. Welcoming remarks were offered by the parish Pastor and Executive Council Chairman Dr. Garo Agopian, both of whom also congratulated the Prelate and conveyed their well wishes of success. The Prelate commended those present for their service and dedication and thanked them for their kind remarks.

In the afternoon, the first lecture in the Year of Christian Education series took place. The lecture was organized by the parish Pastor and Board of Trustees, and featured Very Rev. Fr. Barthev Gulumian speaking on the topic "Christian Education and the Armenian Youth".

Following his welcoming remarks, Rev. Fr. Hrant Yeretizian invited Very Rev. Fr. Barthev Gulumian to present his lecture. Very Rev. Fr. Gulumian spoke of the importance of education in general but especially of Christian education, and the four institutions, family, school, church, and community organizations, that are vital to the proper rearing of our youth. An artistic program also took place alongside the lecture. Closing remarks were offered by the Prelate who commended Very Rev. Fr. Gulumian, reiterated the value of Christian education in our individual and community life, and urged the attendees to focus their efforts on this vital issue and work together towards this purpose. The event came to a close with the Prelate's closing remarks and benediction.

Later on in the day, the Prelate presided over the renaming ceremony of the Armenian Center.